

Բժշկագիտական տեքստի բառապաշարի առանձնահատկությունները

Չնայած լեզվի ուսումնասիրության գործառական ոլորտում տեղի ունեցող վերընթաց զարգացումները խիստ ակնառու են, այնուամենայնիվ, չի կարելի միանշանակորեն պնդել, որ լեզվի գործառական դրսևորումների խնդիրը և այն, թե ո՞ր չափով են գործառական այս կամ այն ոլորտը ներկայացնող տարրերը (բառային, ձևաբանական, շարահյուսական, հնչյունաբանական) դրսևորվում իբրև տվյալ գործառական ուղղվածությունը բնութագրող ոճակագմիչներ, վերջնականապես լուծված է:

Սույն աշխատանքի նպատակն է բացահայտել բժշկագիտական տեքստերին բնորոշ բառապաշարի շերտերի ժանրաոճային յուրահատկությունները և փորձել լուսաբանել դրանց առնչվող որոշ խնդիրներ:

Մեր ուսումնասիրության առարկան բժշկագիտական տեքստն է, որտեղ հաղորդման գործառույթի նպատակն է ճշգրիտ ներկայացնել օբյեկտիվորեն գոյություն ունեցող փաստերը: Նյութի քննությունը ցույց է տալիս, որ այդ նպատակի համար կիրառվում են չեզոք և ուղիղ իմաստ ունեցող տարրեր, որոնք խիստ կոնկրետ և միանշանակ կերպով բնութագրում են բժշկագիտական տեքստում քննարկվող առարկան և դրա հատկանիշները (բժշկագիտական տեքստում դրանք հիմնականում վերաբերում են հիվանդության ախտանիշներին, տվյալ մեթոդով կամ դեղամիջոցով բուժման առավելություններին, բժշկության տվյալ բնագավառում որոշակի կլինիկայի առաջադեմ փորձի կամ ձեռքբերումների քննարկմանը, և այլն): Այս առումով շեշտը դրվում է այն շարույթների վրա, որոնք ներկայանում են տերմինի կամ տերմին-բառակապակցությունների կարգավիճակով: Հարկ է նշել, որ բժշկագիտական տեքստում առօրյա գործածական և ընդհանուր գիտական բառապաշարի կողքին առկա են ոչ միայն գիտական (բժշկության բնագավառն ընդհանրապես

ներկայացնող տերմիններ) այլև բժշկության մասնավոր բնագավառ ներկայացնող տերմիններ, տվյալ դեպքում՝ գինեկոլոգիայի բնագավառը, որոնք գրանցված են բժշկագիտական տերմինների բացատրական բառարաններում (Англо-русский медицинский словарь):

Բժշկագիտությունը անհրաժեշտաբար պարունակում է բառապաշարի այն շերտերը, որոնք հատուկ են գիտական տեքստին ընդհանրապես (Akhmanova, Idzelis 1978): Գիտական տեքստը գիտական հետազոտություն է, որը դրսևորվում է իբրև գիտելիքի ձեռքբերման և կիրառման գործընթաց: Նրանում շղթայաբար իրար են հաջորդում հետևյալ անխուսափելի քայլերը՝

1. կանխատեսում, վարկած (prospect ,outlook),
2. գիտելիքի ձեռք բերում (acquiring knowledge),
3. նյութի դասակարգում և համակարգում (organization and systematization of the material),
4. ստուգում, հաստատում (checking up),
5. եզրահանգումների կատարում (making conclusions),
6. գիտելիքի փոխանցում (passing on knowledge):

Անվիճելի է այն դրույթը, որ գիտելիքի ձեռքբերման վերոհիշյալ քայլերը , որոնք դրսևորվում են որոշակի բառապաշարի միջոցով, փոխկապակցված են և հետևաբար, քննարկման ընթացքում անհնար է դրանք իրարից տարանջատել, և քանի որ դրանց հանրագումարի արդյունքում է ստեղծվում «գիտելիք» կոչվածը (Akhmanova, Idzelis 1978:77-81, Ахманова 1974) :

Որպեսզի հնարավոր լինի լավագույնս ցույց տալ, թե ինչ հիմնական գծերով կարելի է բնութագրել բժշկագիտական տեքստի ընդհանուր գիտական բառապաշարը, իբրև ելակետային հիմք ենք ընդունում այն գաղափարը, որ միայն բառապաշարին անդրադառնալով իբրև մեկ ամբողջության՝ այսինքն համակարգ և ուսումնասիրելով այն իբրև համակարգ, կարելի է ինչպես հարկն է առանձնացնել էականն ու բնութագրիչը և նկարագրել նրա կազմը, իհարկե, անպայման ուշադրություն դարձնելով նրա տարրերի ներքին կապերին (Գասպարյան 2007 :34-37):

Գիտական շարադրանքում գործածվող բառապաշարի հիմնական առանձնահատկությունները բխում են տվյալ ոճի շարադրման յուրահատկություններից: Այս առումով անմասն չէ նաև բժշկագիտական տեքստի բառապաշարը:

Ըստ գոյություն ունեցող տեսակետի, գիտական տեքստի բառապաշարը բաղկացած է երեք անհավասար մասերից. ընդհանուր գործածական բառեր, որոնք կազմում են լեզվի հիմնական բառապաշարը, տերմիններ և տերմինաբանական կապակցություններ: Երրորդ շերտը, որ ամենակարևորն է և ամենահետաքրքրականը, չի պարունակում ո՛չ ընդհանուր գործածական բառեր, և ո՛չ էլ հատուկ տերմիններ: Այս շերտը բնութագրվում է իբրև «ընդհանուր գիտական բառապաշար» և պարունակում է այն բառերը, որոնք ամենաբնական կերպով գործածվում են գիտական տեղեկատվություն հաղորդելու համար՝ անկախ այն բանից, թե տեղեկատվությունը խիստ գիտական է, առնչվում է ճշգրիտ կամ բնական գիտությունների հետ, թե կապված է հումանիտար գիտությունների բնագավառում կատարվող ձեռքբերումների, դիտարկումների կամ ընդհանրացումների հետ: Նման պայմաններում կիրառվող անգլերենը որոշ առումով, պարունակում է սահմանափակ բառապաշար (Akhmanova, Idzelis 1978):

Ասվածը ավելի ակնառու պատկերելու համար անհրաժեշտ ենք համարում ներկայացնել կոնկրետ նյութի (տեքստի) վրա կատարած հանգամանալից վերլուծություն:

Ընդհանուր գործածական բառապաշար ասելով հասկանում ենք լեզվի ամենահաճախ գործածվող բառերը, որոնք կազմում են տվյալ լեզվի հիմքը: Այս խմբին են պատկանում նաև կապական բառերը, որոնք լեզվի հիմքը կազմող բառերը հարաբերում, կապակցում են իրար: Ինչպես հետագայում մենք ցույց կտանք, այս կարգի բառերի մի բավականին շոշափելի խումբ բժշկագիտական տեքստում ձեռք է բերում ոճական տարրեր կողի կարգավիճակ, այն դեպքում, երբ գիտական լեզվի այլ ժանրերում դրանք հնարավորինս չեզոք են: Ընդհանուր գիտական բառապաշար ասելով հասկանում ենք այն բառերը, որոնց օգնությամբ կարելի է նկարագրել և բնութագրել գիտության տարբեր ոլորտներին բնորոշ տերմիններն ու գործընթացները: Դրանք այն բառերն են, որոնք ներթափանցելով ընդհանուր գործածական բառապաշարից ընդհանուր գիտական բառապաշար, վերափնաստավորվել են և դառել որոշակի հասկացություններ: Այս շերտը կազմում է գիտական շարադրանքի հիմքը:

Ինչ վերաբերում է տերմինաբանական բառապաշարին, կամ լայն առումով առանձին գիտակարգերի տերմինաբանությանը, ապա հարկ է նշել, որ այս շերտը

ևս ինքնապարփակ համակարգ չէ և խիստ սահմանազատված չէ նախորդ երկու շերտերից, ավելին՝ փոխազդեցության և փոխանակման գործընթացները գործում են մշտապես և անընդհատ (Троянская 1981:32): Քանի որ լեզուն քարացած երևույթ չէ, ապա վերը նշված երեք շերտերը փոխկապակցված են և հաճախ աղբյուր են դառնում մեկը մյուսի համար: Գիտական արձակի սահմաններում ընդհանուր գործածական բառերը հատուկ նպատակային գործածություն ունեն. դրանք ծառայում են մարդկային խիստ յուրահատուկ գործունեության՝ գիտական հետազոտության նպատակներին: Գիտական գործունեության հիմքում ընկած է **հաղորդակցման** գործառույթը, որի միջոցով էլ իրագործվում է տեղեկության հաղորդման գործառույթը:

Որպես փաստական նյութ մեր ուսումնասիրության համար ընտրել ենք բժշկագիտական տեքստ «Manual of Obstetrics» բժշկաձեռնարկից (Kenneth, Niswander, Arthur Evans 1995:21).

Ընդհանուր գործածական բառապաշար will not change	Ընդհանուր գիտական բառապաշար	Հատուկ գիտական բառապաշար
one of the most important... first examination	noticeably in consistency	estimation of gestational age
weeks until after firm	Conception is estimated by approximately	uterine size nongravid uterus the uterus LMP is palpable at gestational age
Smooth normal size to the top of	there is a rough	Pelvis fundus of the uterus

so that	correlation between	the symphysis pubis
that		Umbilicus
three or more weeks	minor discrepancies	centimetres of fundal curvature
as	resulting from	
last	calculated from	uterine fundus
thereafter	exceed	
normal	Suggests	Adiposity
this	Simply	
situation		anticipated gestation
may	is the best tool	menstrual period
	the finding	multiple gestation
because	is less than expected	molar pregnancy
after correcting	inaccurate dating	Leiomyomata
	Indicate	uterine anomalies
	variation in body shape	adnexal masses
	growth failure	Ultrasonography
	difficult to evaluate	Intrauterine
	are lifted out	Adnexa
initial.. visit		fallopian tubes
masses		Ovary
by	any questionable ...	enlarging uterus
many	should be confirmed	Ultrasonogram
when	Evaluation	bony pelvis
painful	to predict adequacy	obstetric visit
fluctuant	has been a traditional	predictive clinical usefulness
and	Component	
incomplete		x-ray film
may be	this method	Pelvimetry
advisable	yield too many...results	in later stages of pregnancy
	to be of predictive	

problem	usefulness	false-positive and false-negative clinical
high cost	there may be situations,	pelvic examination
uncertain benefit	may provide some useful	Erythematous
small	Information	cystic enlargement
painful	in later stages	delivery
only because	on either side of	lateral vaginal introitus
or	indicate	infection of the Bartholin's gland
except	obstruction	treatment
flat	include	sitz baths
life-threatening situation	may result	analgesic
found	caused by	incision
with	have been shown	drainage
certain	to be associated with	cyst formation
development	may stimulate	abscess
rarely	with development of	resolution
necessary	currently	marsupialization
to prevent	consensus	puerperium
there is also	regarding	recurrent
infant	protective benefit	venereal wart
is unknown	should be avoided	hyperkeratotic
is difficult	may be used	polypoid
however	characteristic	lesion
white	may be encountered	vulvar
are common		perineal area
		vagina
		cervix
		infection

human papilloma virus
viral types
dysplasia
epithelial carcinoma
pregnancy
proliferation
friable
cesarean delivery
extensive vaginal damage
ill-defined risk of transmission
laryngeal papillomata
the mode of transmission
neonate of cesarean versus
vaginal delivery
treatment of the lesions
podophyllin resin
trichloacetic acid
5-fluorouracil
immunotherapy
cryotherapy
electrocauterization
laser
external lesions
erythematous
ulcerate
treatment
symptomatic
acyclovir cream
tablets
contraindicated
rupture

membranes
monilial infection
itchy

Նյութի քննարկումը բժշկագիտական տեքստում, Օ.Ախմանովայի մշակած տեսության համաձայն բերում է այն համոզման, որ, իրոք, տեղի է ունենում բառերի ներթափանցում մեկ շերտից մյուսը, իսկ դա նշանակում է, որ բառապաշարի շերտերը քարացած չեն (Akhmanova, Idzelis 1978, Ахманова 1974:12-15): Բժշկագիտական տեքստի բառապաշարի **առաջին** շերտում նպակահարմար ենք գտնում առանձնացնել բառերի ու բառակապակցությունների այն խումբը (դրանք մեր կողմից ընդգծված բառերն են **առաջին խմբում**), որոնք, ըստ էության բժշկագիտական տեքստի շրջանակներում ձեռք են բերում տերմինաբանական կապակցության կարգավիճակ: Մեր կարծիքով դրանք կազմում են առանձին շերտ կամ ենթաշերտ, և, ինչպես ակնհայտ է դառնում նյութի քննությունից, էական ճանաչողական նշանակություն ունեն բժշկագիտական տեքստի համար: Քննությունից պարզ է դառնում նաև, որ բառապաշարի **առաջին** շերտը քանակական առումով ավելի փոքր խումբ է կազմում, քան երկրորդ և երրորդ շերտերը, այսինքն, բժշկագիտական տեքստը բառապաշարի շերտերի բաշխվածության առումով էապես տարբերվում է բուն գիտական տեքստից (Akhmanova, Idzelis 1978), ինչը վկայում է այն մասին, որ գործառական-ոճական առումով բժշկագիտական տեքստը կարող է դրսևորվել ենթաոճի մակարդակով:

Այժմ դիտարկենք մեր կողմից առանձնացված կապակցությունները:

First examination: First & examination բառերը դասվում են առօրյա խոսակցական բառապաշարի շարքին, սակայն բժշկագիտական տեքստում դրանք ձեռք են բերում տերմինաբանական կապակցության կարգավիճակ, **քանի որ դառնում է այն ելակետային վիճակը, որի հետ կարելի է համեմատել հետագա փոփոխությունները: Normal բառը առօրյա խոսակցական լեզվում կարող է վերաբերել ցանկացած երևույթի, սակայն normal non-gravid uterus**

կապակցության մեջ այն ձեռք է բերում խիստ կարևոր իմաստ, որովհետև նշված օրգանի շեղումները կարելի է ընկալել որպես այդպիսին՝ միայն համեմատելով նորմայի հետ:

Առօրյա խոսակցական *firm, smooth* բառերը գործածվում են նշված օրգանի նորմալ վիճակը նկարագրելու համար:

Նշված *the last normal menstrual period* բառակապակցությունը բժշկագիտական տեքստում ձեռք է բերում տերմինաբանական կապակցության կարգավիճակ:

Is the best... tool for this situation կապակցությունը կարելի է համարել որպես ընդհանուր գիտական, որը հնարավոր է գործածել ցանկացած գիտական տեքստում, սակայն *diagnostic* բառի ներմուծումով՝ կապակցությունը ոճակագմիչ է դառնում բժշկագիտական տեքստի համար:

Delivery բառը ձեռք է բերում տերմինի իմաստ: Նշված տերմինները և տերմինաբանական կապակցությունները, ինչպես նաև վերը նշված կառույցները, որոնք պարզապես մի քանի օրինակ են ներկայացնում տվյալ հոդվածում ոչ միայն ոճակագմիչ տարրեր են, այլև ճանաչողական արժեք ունեն բժշկագիտական տեքստը ընկալելու գործում: Հետաքրքրականն այն է, որ եթե համեմատենք սովորական գիտական տեքստի բառապաշարի հետ (Գասպարյան 2007:89), ապա ակնհայտ է դառնում.

1. Առօրյա խոսակցական բառապաշարի մի բավականին մեծ խումբ ի հայտ է բերում նոր հատկանիշների ամբողջություն՝ ստանալով տերմինակերպ կապակցության կարգավիճակ, ինչպես, օրինակ՝ *eating with, burning of*.

2. Ընդհանուր գիտական բառապաշարում մեծ տեղ են գրավում կաղապարային արտահայտությունները, որոնք երբեմն բավականին երկար են՝ *the top of the symphysis pubis, uterine size, x-ray film* և ընդամենը մեկ կամ երկու տերմինի կամ տերմինաբանական կապակցության ներմուծմամբ ձեռք են բերում բժշկագիտական տեքստի ճանաչողական կառույցի կարգավիճակ:

3. Ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ առօրյա խոսակցական բառապաշարի կողքին կան նաև մեծ թվով չեզոք գրքային կամ պաշտոնական ոճ ներկայացնող բառեր, որոնք մենք նպատակահարմար ենք գտնում դասել ընդհանուր գիտական բառապաշարի շարքին՝ *evidence of, found in, must be aware of, should be confirmed, should be performed high risk populations, should be*

evaluated, inaccurate dating, suggests that evaluation, estimation, is less than, with an improvement, routine cases, some studies have suggested, in association between.

4. Քանի որ մեր ուսումնասիրության նյութը վերաբերում է գինեկոլոգիայի բնագավառին, ապա հաճախ հանդիպում են նաև այնպիսի կապակցություններ, որոնք միայն տեքստի մեջ են տվյալ բնագավառի հետ առնչություններ ստեղծում. օրինակ՝ *the couple, the sexual partner, at risk, high risk, patient education, weight, blood pressure, normal progress, tolerance to heat, encourage to exercise, to avoid too much stress, can be adapted to the needs of most women, smoking* (տվյալ բառը հաճախ գործածվում է *low-birth rate, premature labor, miscarriage, stillbirth, crib-death, birth defects, increased respiratory problems, have a pronounced effect բառերի և բառակապակցությունների հետ*): *Complication* բառը, ինչպես նաև *rupture, high-fiber diet, regular exercise, warning signal* բառակապակցությունը, որոնք կարող են հանդիպել ցանկացած տեքստում, բժշկագիտական տեքստում դառնում են ուշադրությունն ակտիվացնելու տարրեր (Գասպարյան 2007 :50):

5. Բժշկագիտական տեքստերի առնչությամբ անհրաժեշտ է հատուկ շեշտ դնել հունա-լատինական փոխառությունների վրա (*symphysis pubis, umbilicus, uterus, Bartholin's gland, candidomata acuminata, monilial vulvovaginitis etc.*): Եթե համեմատենք մեկ այլ գիտական տեքստի հետ, ապա դրանք հիմնականում e.t.al կարգի արտահայտություններ են, երբեմն նաև տերմիններ, մինչդեռ բժշկագիտական տեքստում լատինական արմատ ունեցող կամ լատիներենից փոխառված բառերն ու բառակապակցությունները մեծ թիվ են կազմում և առնչվում են տերմիններին և տերմինաբանական կառույցներին:

6. Թեև *is palpable* արտահայտությունը համարժեք է հայերենի «*ակնհայտ է*» արտահայտությանը մենք այն դիտում ենք որպես բժշկագիտական տեքստի ոճակազմիչ տարր, քանի որ այն ի տարբերություն *is obvious* արտահայտության, ոճական առումով չեզոք չէ: *Palpable* ածականի հիմքը *palpate* բայն է, որը համարվում է բժշկական տերմին (*to examine part of the body by touching*) (Oxford Advanced Learner's Dictionary by A.S. Hornby., 7th edition, p.1053): Եվ տարօրինակ չէ, որ բժշկագիտական տեքստում հենց այս արտահայտությունն է օգտագործվում ավելի համոզիչ հնչելու համար, քանի որ շոշափման միջոցով բացահայտված փաստը անվիճելի է դառնում: Թերևս այն կարելի է համեմատել

հայերենում նրա համարժեքի հետ *անգեն աչքով կարելի է նկատել*, որը բժշկական բնագավառին չի վերաբերում, կարող է հանդիպել ցանկացած գիտական տեքստում, սակայն հավաստիացման մակարդակով ունի ավելի բարձր աստիճան, քան *ակնհայտ է* արտահայտությունը և ոճական առումով չի կարելի այն լիովին չեզոք համարել:

Հայերենում կա նաև *ավելի քան ակնհայտ է* արտահայտությունը, որը ոճական առումով համարժեք է նշված արտահայտությանը:

Այսպիսով, ամփոփելով կարելի է ասել, որ բժշկագիտական տեքստը հարուստ և հետաքրքիր լեզվաբանական նյութ է պարունակում գործառական-ոճական ուսումնասիրության համար: Առօրյա խոսակցական բառապաշարի մի մեծ խումբ ձեռք է բերում տերմինակերպ կապակցության կարգավիճակ: Ընդհանուր գիտական բառապաշարում կաղապարային արտահայտությունները մեկ կամ երկու տերմինի ներմուծմամբ ձեռք են բերում բժշկագիտական տեքստի ճանաչողական կառույցի կարգավիճակ: Բժշկագիտական տեքստի բառապաշարի հանգամանալից քննությունը վկայում է այն մասին, որ բուն գիտական տեքստի բառապաշարի համեմատությամբ այն դրսևորում է լիովին նոր հատկանիշներ: Եթե բուն գիտական տեքստում ընդհանուր գործածական բառերը ավելի մեծ խումբ են կազմում քան ընդհանուր գիտական կամ մասնավոր գիտական բառաշերտերը, ապա բժշկագիտական տեքստում քանակական առումով ամենահագեցածը տերմինների շերտն է, որտեղ զգալի թվով հունալատինական փոխառություններ կան:

Ծանոթագրություններ

Հարկ ենք համարում նշել, որ բառապաշարի քննությունը կատարված է մի քանի բժշկագիտական գրքերի և հոդվածների հիման վրա, սակայն սույն հոդվածի սահմաններում նպատակահարմար ենք համարել ներկայացնել միայն որոշակի էջերի բառապաշարի քննություն, քանի որ մեկ հոդվածի սահմաններում անհնար է ներկայացնել այդպիսի հսկայածավալ նյութի քննություն:

Գրականություն

1. Ахманова Г. (1974) Функциональный стиль общенаучного языка и методы его исследования. Москва.
2. Akhmanova O., Rolandas F. Idzelis, (1978) What's the English We Use? Moscow,
3. (1992) Англо-русский медицинский словарь.:Издательство Lingva: Таллин.
4. Չափաշարյան Ն. (2007) *Արտոնագրային մասնագրի լեզվաոճական առանձնահատկությունները*. Երևան:
5. Kenneth R. Niswander, Arthur T. Evans. (1995) Manual of Obstetrics. USA.
6. Троянская Е.С. (1981) Типы научных и технических текстов и их лингвистические особенности. Москва.
7. Oxford Advanced Learner's Dictionary by A.S. Hornby., 7th edition.